


ԲԵՄԲԱՍԱՑԸ ԵՎ ՀՈԵՏՈՐԸ

«Տէ՛ր, երէ զըրուն իմ բանա,
թերան իմ երգեցէ զօհնուրիւն եռ»:
ՍԱԿՄՈՒ Մ, 47:



Եծի Տանն Կիլիկիո Հանգուց-
յալ Հայրապետի ասպարեզի
բոլոր Հանգրվանները եղել են
բեղմնավոր, չի ստեղծագոր-
ծական ոգևորությամբ: Վաթուն երկար
տարիների վրա բաշխված նրա անխոնչ
գրական, պատմական վաստակի կողքին,
պակաս տեղ չեն գրավում նրա կրոնական
դրականության երկերը, քարոզները, ճառե-
րը, հոգվական ընդհանրական թղթերը և
զասախոսությունները:

Հանգուցյալ Վեհափառի քարոզների նշա-
նաբանն է Հանդիսացել Խոսքի «Միիթարե-
ցէք, միիթարեցէք զգողովորդ իմ» մարգա-
րեական խոսքը (Խոսքի, Խ 1): Վաթուն
ձիգ տարիներ նա խոսել է, միսիթարել, խան-
դավառել բազմություններին, Հայրենիքի սի-
րով, Եկեղեցու սիրով, Աստուծո Հայատով:
Նա աիրապետել է խոսելու մեծ արվեստին,
ունենալով բարձր խոսքի մեծ կուտուրա:
Նրա ճառերի, քարոզների, հոգվական թղթե-
րի մեջ արտահայտված մաքերն ու զգաց-
մունքները, նրա ներքին աշխարհից, համոզ-
մունքներից են բիւել: Հոգեկան մեծ վայելք
էր լսել նրան: Նրանք, ովքեր արժանացել են
այդ մեծ բախտին, անմոռաց հուշեր են պա-
հել նրա մասին:

Նա գեղարվեստական խոսքի մեծ վարպետ
էր: Մտերիմ շրջանակներում էլ նրա խոսքն
ուներ հմայություն, քաղցրություն, սրտա-
պավ պարզություն: Նա շատ լավ տիրտապե-
տում էր մեծին ու փոքրին, յուրաքանչյուր
անհատի դիրքին ու զարգացման համեմատ
խոսելու մեծ արվեստին:

Խոսքի այսպիսի մեծ շնորհ շատ քշերին է
տրված: Նրա հոգեպարհար ճառերը, քարոզ-

ները, բովանդակալից դասախոսություննե-
րը գրվել են, արտասանվել ու կարդացվել
խոսքի մեծ շնորհով:

Դժբախտաբար ցարդ չի ուստիմնասմիրված
նրա Եկեղեցական, քարոզական մեծ վաս-
տակը: Նոր է լուս տեսնելու, իր աթոռա-
նիստ տպարանում՝ Անթիլիսաում, նրա քա-
րոզների, ճառերի, հոգվական թղթերի շնորհ-
ընկալ և անհետածելի տպագրությունուր:

Ինչ խոսք, որ մեծ է այդ վաստակը:

Ամենից առաջ անհրաժեշտ է նկատի ու-
նենալ, որ նա գաղափարասպաշտ, Հավա-
տավոր, ազգասեր Եկեղեցական գրող է:
Եկեղեցասիրությունը, ինչպես և Հայրենա-
սիրությունը նրա մոտ տարերք են: Նրա Եկե-
ղեցական գրականությունը հագեցված է
ուստցողական շնչով, Հարուսա՝ ձեմի և բո-
վանդակության տեսակետից: Սուրբգրական
նյութերը նա գեղարվեստական նոր վերա-
մշակման է հնաբարկել, վերստեղծել, նոր
մեկնություն, նոր շունչ ու լիցք է տվել
նրանց, առգորել հայ կենցաղով, հայ մտա-
նությամբ, զգայնությամբ, առանց սակայն
նշանախեց անգամ փոխերու նրանց հիմնա-
կան, քրիստոսավանդ բովանդակությունից և
առաքելական Համացողությունից: Մինչեւ
իր վերջին շունչը, նա խրատել է, քարոյա-
խոսել, միսիթարել Եկեղեցու բեմից, ամբիոն-
ներից, լսարաններից, մերթ գրավոր հոգվա-
կան թղթերով, մերթ քարոզներով, կենդանի,
անմիջական խոսքով:

Նրա քարոզներում ցուց են տրված հայ
ժողովրդի ունեցած բարձրագույն չափանիշ-
ները ընտանիքի, սիրո, կենցաղի և այլ նյու-
թերի մասին: Նրա Եկեղեցական, քարոյա-
խոսական վաստակը, իր հենքով, կառուց-

վածքով՝ առանձնահատուկ երևույթ է, արդեն իսկ շատ աղքատ, շատ խեղճ մեր նոր կրոնական գրականության մեջ։ Այնտեղ իրար են լրացնում՝ գիտունն ու կրոնավորը, արվեստագիտն ու տեսաբանը, նա իր կրոնական վաստակում արձագանքում է իր ժամանակակից բոլոր հարցերին։ Հայ հյանքի բոլոր հարցերը շոշափված, վճռված, լուսաբանված են այնտեղ։ Դրանք ունեն նաև ձանաշողական մեծ արժեք։ Այսպես, նա ու միայն հարստացրել է մեր եկեղեցական դրականությունը, այլ նոր լիցք, նոր բովանդակություն է տվել նրան՝ պահպանելով կրոնաշունչ գրականության հիմնական հատկանիշները։ Եթե կարում ենք հեղինակի արյունով, արցոնվով գրած տողերը, մի անանում, սրբազն ոգեսրությամբ ենք լցովում։ Զգում ենք, որ վարպետի շունը կա ամեն մի տողի մեջ։ Մեծ է նրա ճառերի, քարոզների, հովվական թոթերի, դասախոսությունների մշակութային, գեղարվեստական արժեքերը, հասարակական նշանակությունը։

Նրա ճառերի, քարոզների գաղափարական բովանդակությունը, ղեկավար գաղափարը, հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունն է։ Հայրենիքին ու եկեղեցուն ծառալելը բարձրագույն առաքինությունն է նրա համար։

Նա անցյալ դարի 90-ական թվականներից, երբ ողջ Հայ մշակույթի և Հայ հոգու վրա իր սե թելերն էր տարածել մահաշունչ հետադիմությունը, նոր և փառավոր էջ բացեց մեր քարոզական գրականության մեջ։ Մեր անցյալի պատմությունը, իր հերոսական դրվագներով, մշակութային մեծ նվաճումներով, նա ի սպաս է բերել ներկային, պատմական խնդիրների արծարծումով՝ ազդել ժամանակակից մաքերի վրա, որոշ ուղղություն տալ մտքերին, ոգեսրել նրանց և առաջ մղել։ Հայ մշակույթը պաշտամունք էր նրա համար, սրբություն սրբոց, «եկեղեցին վաղուց սրբերի կարգն է դասել ոչ միայն նահատակներին, հավատի համար արյուն թափողներին, այլև մշակույթի և լուսավորության գործի մեծ վաստակավորներին»։ Այդ մեծ վաստակավորներից մեկն է եղել Հենց ինքը։ «Էլավ է պատերազմի դաշտում ընկածների հիշատակը պահել և երախտագետ լինել նրանց, ովքեր իրենց արյունով ազգ և եկեղեցի են պահպանել, ինչպես Վարդանանք, բայց պահաս արժեքավոր չել խավարի և անդիտության գեմ պայքարողների գործի...»։

Նրա գրական ստեղծագործության նպատակն է եղել՝ գտնել մեր անցյալը, հայտնագործել այն ոգին, որը հատուկ է եղել մեր

մշակույթին և այն դարձնել մեր օրերում՝ ուժի, ներշնչումի անսպառ աղբյուր։

«Պատմության մեջ էականը այն չէ, — գրել է Հանգուցյալ Վեհը, — թե մի ազգ որչափ հզոր է եղել, նվաճումներ կատարել, շատ անգամ իրենից թուլ ազգերին ոտքի տակ արորել, այլ թե ի՞նչ հոգերո ժառանգություն է թողել իր ազգին և մարդկության։ Ազգերի կյանքի մեջ ամենից նշանակալիցը, ուրիմն և մնայուն՝ նրանց ստեղծագործությունն է, մշակույթը։ Ապարախտ է եղել մեր վիճակը քաղաքական տեսակետից, բայց ամաչելու պատճառ չունենք հոգերո և մշակութային կյանքի մարդերում»։

Բարձր է ու պատվավոր եկեղեցու պաշտոնյայի գործը հասարակական կյանքում։ Նա կոլված է հոգեպես մխիթարելու, սփոփելու, իր տեսչության, խնամքին հանձնված հավատացյալներին։ Հավատացյալ հոգիներ միշտ էլ կարիք են ունեցել հոգերո մխիթարության։ «Խօսեցարուք ի սիրտ երուազեմի»։ Այս է պահանջում Աստված իր հոգմոր պաշտոնյաներից— ժողովրդի սրտով, ժողովրդի սրտի համեմատ խոսեցեք մխիթարեցներ են նրանք և «Վայ» է նրանց, եթե շավետարաննեն» (Ա. Կորնթ., թ. 16)։ Ճշմարտությունը, արդարությունը, իրափունքը, Աստված հայրության գաղափարը, ազգերի եղբարրության, ժողովուրդների համերաշխության սկզբունքը, չպարտաբերեն մեղքի, տգիտության, շարիքի, սարդկության, խոսլության դեմ։

Այսպես էր կյանքում Գարեղին Վեհը, տիպար քարոզիչը։ Սրա համար ևս շատ դիպուկ է այն ասուցիթը։ «Ո՛չ երբեք այնպէս խօսեցաւ մարդ» (Հովհ., է 46)։

Նրա կրոնական քարոզները աշքի են ընկենում իրենց բանաստեղծական շնչով, լեզվի մշակութով և արվեստի բարձր արժանիքներով։ Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, շոշափելիությունը, գունագեղությունը, պատկերագուրթյունը նրա քարոզական արվեստի, բհմական արվեստի առանձնահատկություններն են։ Նա դրսուրեց իր մտքի զգացմունքների հարստությունը։ Նրա բեմական արվեստը կենդանի է, գողոր, ազգու իր գաղափարական հագեցվածությամբ, ձևի կատարելությամբ։

«Ո՛ւր է կանթեղը... ծունկ եմ շրբում, աղոթում, հեկեկում... Ա՛խ, ո՛ւր է կանթեղը, Հայոց աշխարհի լուսաւու կանթեղը մշտավառ... Նա միայն արդարներին և հավատով ալղողներին է տեսանելի, իսկ ես մեղավոր եմ»։

Ո՛ւր էլ որ գնաց, պարտականության

ձայնն ու կոչումի գիտակցությունը ո՞ւ էլ որ տարան նրան, նա իր հետ տարավ ծիեղեցու և Հայրենիքի նվիրական սերը: «Քրիստոնեությունը, — զրում է Ամենայն Հայոց Հայրապետ Գեորգ Զ.ը., — ոչ միայն ընդունում է Հայրենասիրության դադափարս, այլև շատ բարձր է գնահատում սերը դեպի Հայրենիքը»: Գարեգին Վեհի բովանդակ կյանքը այդ դադափարս պարզաբար արտահայտությունն հանդիսացավ. «Մի մարդ, որի սրտի մեկ կիսը Հայաստանն է, իսկ մյուսը՝ եզրիածին»:

«Գեղեցիկ է մեր երկիրը, այլտեղ է Արարատը մշտապես իր ճերմակ դագաթով, առավոտյան՝ երկինքը իր ծիրանի գոտին է կապում նրա ճակատին, օրվա մյուս պահերին, տարբեր պազդումներով և երանդներով է զարդարում նրան, իր առանձնացած հպարտության մեջ: Հայաստանի բարձրադիր լեռներից երևում է նա: Առաջն է Այրարատյան պատմական ընդարձակ դաշտը... նաշխած ծրասխի բազմաթիվ գետակիցներով. անդին՝ հայկական մյուս լեռները, Արագածների դագաթներով աշտարակված և որոնց միջից պազդում է Լուսավորչի կանթեղը: Այս հրաշալի ավանդությունը իր բարձր իմաստով հայ ժողովրդի հոգեկան աշխարհն է խարհրդանշում: Դառնություններ, կորուստներ նրովական թերարոյական, շատ ենք ունեցել: Անկման այդ տիսուր օրերին, չհանդավ Լուսավորչի կանթեղը: Հայ ժողովրդի իմաստովթյան, գոյության, ձգուածում նրազան սրբազն է այն»:

Խոսում է Վեհը ամեն տեղ, խոսում է բանաստեղծի խանդավառությամբ, համոզումով, քաղցրությամբ, կուռ տրամաբանությամբ, էլեկտրականացներով ամենին իր դիպուկ, նպատակաւաց բառերով, հափշտակված վիճակի մեջ է պահում ունկնդիրին, թովում, գերում է նրանց, տանում դեպի բարձունքները, ուր Աստված է խոսում միշտ: Իր Հայրենաշշունչ ճառերով նա խանդավառել է բազմություններին, բորբերել սրտերում Հայրենասիրական անշեղ կայծերը, ճրգեհել սրտերը Հայրենասիրությամբ: «Ուր որ էլ եղել է նա, Արարատի նվիրական փեշերից մինչև Խաղաղականի ափերը, իրանի սարահարթից մինչև նեղոսի հովիտը, Եվրոպայի երկրներից մինչև Միջագետի երկրները, ամենուրեք ու ամեն տեղ հայ ժողովրդի աստանդական բեկորներին կոչ է արել արեածաղկի նման երեսով դարձած մնալ դեպի Արարատի ստորատում ծաղկող Հայրենիքը, դեպի թանկագին Սովորական Հայաստանը, որը հայ ժողովրդի կենդանության արևն է»: Կորդորել է

աշքը պահել «ուղղած մեր Հայրենիքին՝ Սովորական Հայաստանին, սիրել նրան սրտի ամբողջ էությամբ»: Ու ինքն էլ ամբողջ էությամբ սիրել է Հայրենիքը, ողեշնչվել նրա հարածուն վերելքով: Հայրենիքից հեռու, բայց միշտ Հայրենիքի հետ:

Նրա ողջ կյանքը եղել է որոնում՝ լուսաի, ճշմարտության, սիրո, գեղեցկության, բարության: Նա մարմնացումն է իր ժողովրդի դարավոր առաքինությունների, հայրենասիրական ավանդությունների, հայրենի սրբությունների:

Նա իր խոսքի մեջ դրել է ոչ միայն իր դիտությունը, խորը հմտությունը, այլ նաև անսպառ եռանդը, իր հոգին, մեր դաշտերի երգը, մեր ջրերի կարկաչը, մեր լեռների վեհությունը, մեր ձորերի խորությունը, մեր ժողովրդի մարդաբարությունը, լուսատենչ, լուսաթաթիւ էությունը:

Նրա ապրած կյանքը մեծ ու պայմանագործ է եղել՝ իր հավատին, համոզմունքներին, տեսիլքներին: Հենց դրա համար էլ նրա բեմական արվեստը բարձր է, տպավորիչ, անմիջական, ջերմ: Նրա ճառերին, քարոզներին հատուկ են եղել, իբր հատկանիշ՝ թիշչը, թևավոր պատկերներն ու մտածումները, պարզությունը: Պարզ են նրա խոսքերը, որովհետև հստակ է նրա միտքը: Նրանք ուղիղ գծով իջնում են մարդկանց հոգիների խորքը, հուզաւ, փոթորկում այն, խանդավառում, ապրեցնում: Զերմ են նրա արտահայտությունները, որովհետև հավատի անշեղ կրակից են սնված:

Խոսքի մեծ վարպետ է նա, գիտի մեկ հարձակումով գրավել, զինաթափ անել ունկնդիրներին, պահել նրանց իր հոգեզմայի, հափշտակող խոսքի աղեցության տակ, ներշնչել վսեմ ու ազնիվ գաղափարներ:

Որքան են քաղցր, սփոփիչ հնչամ նրա խաղաղության պատգամները: ՇԱՅՐՈՒԹՅԱՆ գաղափարով և հավատով մարդիկ դառնում են եղբայրներ, որովհետև խաղաղությունն է հաստատվում երկրի վերա: Ուր եսն է, սիրելիք, ատելությունն է, վեճն ու կոփը, այնտեղ ոչ Աստված կա, ոչ խաղաղություն: Խաղաղության մեծ կարիք ունի մեր ժողովուրդն էլ: բայց փոթորկի ցանելով խաղաղություն շենք հնձի: Մենք պետք ունենք խաղաղ և շինարար գործունեության: Նախանցար պատերազմի տարիներին մեր ստացած վերքերը դեռևս չեն բուժված: Զգաստանանք, շրջահայաց լինենք, համարանանք մեր վիճակը, հավաքնենք մեր ցրված ուժերը, առանց խոսքի ու աղմբկարարության, բոլորվենք եկեղեցու շուրջ, որը միության, խաղաղության, սիրո և եղբայրության հաստատությունն է»: Ահա մի

մարդ, մի եկեղեցական, որ ավելի քան վաթսում տարիներ այս շնչով ու հոգով ծառայել է իր ժողովրդին, իր կոչումին արծանավայել գիտակցությամբ նա հայ ժողովրդի երկնակամարի վրա փալող վառ շահերից մեկն է եղել, լուսավորչի կանթեղը կախվել է նրա պերճախոս շրթներից, որտեղից բխել են անսպառ աղբյուրի նման նրա հոգեզմայլ քարոզները։ Այդ կանթեղը նրա մատների արանքում եղել է գրիչ, լեզվի ծայրին՝ խոսք։ Նրա կյանքը եղել է անշեշ և լուսավայժառ, ինչպես իր ժողովրդի հավատը։

Իր բարձր կոչման ու պարտականության խորը գիտակցությամբ, նա իր անձը դարձրել է համակ օրհնություն, օծություն, խունկու աղոթք։

Ամենաինքնատիպ եկեղեցականներից մեջը, շողողուն տաղանդ, նուրբ, զգայուն հոգի. նրա կրոնաշունչ, հայրենաշունչ քնարը առողջ է, կենսաթրթիռ, ոգեսրիչ, հայիցի։

Նա իր մաքուր հոգու արտափայլումը, անկեղծությունը ի սպաս է դրել հայ հոգիների աղնվացման։ Մարդարեական տեսլապաշտությամբ զգում է Աստված և ծգտում է այն կենդանի, շնչող, իրականություն դարձնել մարդկանց որդիների կյանքում։ Շես յանրծութեան իմում գնացի։ ամեն տեղ և ամեն ինչում մաքուր, սուրբ, ինչպես դիտեն լինել աստվածության, գեղեցիւթյան, լուսի մոտ կանգնած երշանիկ հոգիները։

Մեծ աղոթող է նա, Նարեկացու տիպի։ Աղոթքի թելերով նրա հոգին կապվում է Աստծուն։ Հավատում է խորապես ու ապրում ինչ որ քարոզում է։ Հակասություն շկա նրա խոսքի ու գործի միջև։ Նրա կյանքը ապրված քարոզ է, քարոզը՝ մարմին առած կյանք։ Նրա քարոզները լոկ սուրբգրական պատմումներ շեն, այլ սրբազն քնարերգություն, որով ունկնդիրը տարվում է դեպի հավիտենական ճշմարտության ոլորտները։

Որքան կրակ, բանաստեղծություն, հավատ կա նրա փոքր մարմնի մեջ։ Կարծես մի անկեր մորենի է, վառվում է, լուսա-

վորում, բայց չի հատնում, չի հանգում։ Նա ապրել է այդ տկար մարմնի մեջ 85 տարիներ։ Իբրև կենսափիլիսոփայական խորիմաստ ու լայն ընդհանրացումներ, նա օպտագործել է ժողովրդական դարձվածներ, առակներ, ոճեր, իր ողջ ստեղծագործության մեջ։

Նրա կրտնական գրականությունը, քարոզները, ազգային շնչով լասախոսությունները, նրա հարազարդացությունը ու խաղաղ հոգու, իղձերի, երազների, ձգտումների արտահայտություններն են։ Նա խոսքի կախարդական վարպետ էր։ Իր քարոզներում նա հասել է գեղարվեստական խոսքի գատարելության։ Այդ հրեղեն լեզվով նա լեզու է տվել նույնիսկ մեր Հայրենիքի քարերին, զրերին, զեփյուտին։ Նրա խոսքի մեջ զգում ես հայոց մեծասարքանց լեզվի գեղեցկությունը, բանաստեղծությունը։ Նա խոսում է և պատկերավոր, և կրքոտ, որովհետև նրա խոսքը չի բխում գրքերից, այլ սեփական համոզմունքներից, սրտից։

Նրա եկեղեցական ժառանգության մեջ վառ, գեղարվեստական պատմումներով հայ ժողովրդի մտքի ու հոգու հարազարդացությամբ, արտացըլվում է մեր ժողովրդի քարոյական հասկացողությունը, նրա աշխարհազգացողությունը, երջանիկ ապագայի վառ հույսը, հայրենասիրությունը, մեր ժողովրդի մարդասիրությունը, աշխատասիրովունը, լավատեսությունը։

Հայ ժողովուրդն իր այս հարազարդացության սիրելի զավակի մեջ ողջունել է հավատի, նվիրման, հայ մշակույթի անխարդախ ծառայության նվիրված մարդու կերպարը։ Եվ այս առաքինությունները նրան տվել են անսպաս կորով ու կամք, պայծառություն՝ իր մտքին, պերճախոսություն՝ իր լեզվին, զրավշություն՝ իր անձին, պատկառազդություննակություն՝ իր դիրքին։

«Մշակ առանց ամօթոյ»։

Թող նրա սուրբ հոգին անշեշ մնա կուսավորչի կանթեղի նման Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կամարի տակ։

Խո՛մկ ու արցունք անթառամ հիշատակիդ, Վեհափառություն։

